

Ալիս Մանուկյան

Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XIX համագումարը լուրջ պարտավորություններ դրեց իդեոլոգիական բնագավառի աշխատողների առաջ, և պահանջեց տեական ու ծրագրված պայքար մղել մարդկանց գիտակցության միջից կապիտալիզմի մնացուկների լիկվիդացման համար:

Համագումարը նշեց, որ մեզ մոտ դեռևս պահպանվել են բուրժուական իդեոլոգիայի մնացորդները, մասնավոր սեփականատիրական հոգեբանության և մորալի մնացուկները, որոնց վերացման համար պետք է վճռական ու տեական պայքար մղել և որ այդ բնագավառում խոշոր դեր ունի կատարելու երգիծական դրականությունը: Համագումարում նշվեց, որ հարկավոր են սովետական գողությունը և շեղումները, որոնք երգիծանքի կրակով կյանքից իսպառ ալրերին այն ամենը, ինչ բացասական, նեխած, մահացած երևույթ է, այն ամենը, ինչ արգելակում է առաջընթացը:

Համագումարի այս պահանջը, որ բազմիցս առաջ քաշվեց նաև մեր կենտրոնական Կոմիտեի օրգան «Պրավդա»-ի էջերում, անհրաժեշտություն է դարձնում հայ խոշորագույն երգիծաբան Հակոբ Պարոնյանի գրական ժառանգության գիտական ուսումնասիրման և օգտագործման հարցը: Պարոնյանի խորապես գաղափարական, ինքնատիպ, գրական հնարներով հարուստ ու բազմազան երգիծանքը, որով նա մեծագույն տաղանդով պատկերել է իր ապրած ժամանակաշրջանը և կայացրել իր դատավճիռը այս կամ այն երևույթի նկատմամբ, այսօր էլ չի կորցրել իր ուժն ու կենսունակությունը: Պարոնյանի սքանչելի աֆորիզմները, դիպուկ համեմատությունները բազմիցս և տեղին օգտագործվում են անցյալի մնացուկների դեմ մղվող մեր իդեոլոգիական պայքարում, ավելի նպատակասլաց դարձնելով այդ պայքարը:

Նախասովետական տարիներին գրեթե մոռացված մեծ երգիծաբանը զնահատվեց միայն սովետական շրջանում: Աննախընթաց չափով, մեծ տիրաժով և բազմաթիվ հրատարակություններով լույս տեսան նրա անմահ երկերը: Պետհրատը ձեռնարկեց Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակման գործին և լույս ընծայեց 11 հատոր: Պարոնյանի կոմեդիաներից «Բաղդասար աղբար»-ը, «Ատամնարույժն արևելյան»-ը և «Նողոթորթը» իրենց արժանի տեղն ունեն ոչ միայն սովետահայ բեմում, այլև գրանցից «Բաղդասար աղբար»-ը քանիցս ծափահարվել է նաև ռուսական բեմում: Պարոնյանի ընտիր երկերից մի քանիսը՝ «Բաղդասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ» և այլն, թարգմանվելով ռուսերեն, հրատարակվել են մեծ տիրաժով և դարձել Սովետական Միության ժողովուրդների սեփականությունը:

Սովետական հասարակայնության այս բուռն հետաքրքրությունը դեպի հայ մեծ երգիծաբանի ստեղծագործությունները, անհրաժեշտություն են դարձնում

Պարոնյանի գրական ժառանգության բազմակողմանի ուսումնասիրությունն ու հմտալից մենագրությունների ստեղծումը՝ մի կարևոր աշխատանք, որն անհնար է կատարել առանց Հ. Պարոնյանի գրական ամբողջ ժառանգության գիտական հրատարակության, առանց որոշելու այն հարցը, թե մեծ երգիծաբանին վերագրվող երկերից որոնք են պատկանում նրա գրչին, և որոնք սխալմամբ համարվել են նրանը:

Այս տեսակետից, սովետական գիտության ներկա պահանջներին չի կարող բավարարել Պետհրատի կողմից հրատարակված բազմահատոր ժողովածուն:

Պարոնյանի մասին որևէ ամբողջական աշխատության բացակայությունը, պարբերական տարբեր մամուլում նրա երկերի ցրված լինելը, այդ մամուլի որոշ մասի պակասը մեր գրադարաններում, մասամբ և երգիծաբանի երկերի ժողովածուն կազմողների անիրազեկությունը հեղինակի ժառանգությանը, պատճառ են դարձել, որ Պարոնյանի աշխատությունները լույս տեսնեն աղավաղումներով ու վրիպումներով: Թե որքան հապճեպ, առանց լուրջ նախապատրաստման է սկսվել վերոհիշյալ ժողովածուի հրատարակությունը, երևում է այն փաստից, որ ժողովածուն կազմողների և խմբագրողների նախատեսումով Պարոնյանի ամբողջ ժառանգությունը պետք է լույս տեսներ 6 հատորով, մինչդեռ նախորդ հատորների համեմատությամբ ավելացել են ևս 5 ստվար հատորներ և դեռ դժվար է ասել, թե քանի հատոր կարող են կազմել մամուլում մնացած նյութերը:

Պարոնյանի երկերի լիակատար ժողովածուի մանրամասն քննարկումը մեր ծրագրից դուրս է և առանձին հարց: Անհրաժեշտ ենք համարում միայն նշել նրա ընդհանուր բնույթի այն թերությունները, որոնք առնչվում են մեզ իրադեպնող հարցի հետ:

1) Հատորները չեն պարունակում Հակոբ Պարոնյանի ամբողջ ժառանգությունը: Չեն պարունակում անմահ երգիծաբանի անգամ այնպիսի նշանավոր երկերը, ինչպիսիք են «Ազգային ջոշերից» հատվածներ, ընդարձակ վիպակներ, քաղաքական մի շարք սուր ֆելյետոններ և այլն:

2) Հատորներում տեղ են գտել որոշ նյութեր, որոնք կամ որոշակիորեն Պարոնյանի գրածները չեն, կամ, առնվազն վիճելի է նրանց հեղինակի պատկանելիության հարցը:

3) Ժողովածուում զետեղված որոշ նյութեր անփուլթ խմբագրման պատճառով կրկնվում են տարբեր հատորներում:

4) Պարոնյանի տեքստը ներկայացված է սովետական գիտության ներկա պահանջներին չհամապատասխանող այնպիսի կոմենտարներով, անձնանունների բառարաններով, որոնք երբեմն իրենց սխալ բնութագրումներով ապակողմնորոշում են ընթերցողին:

Հ. Պարոնյանի երկերի նոր գիտական հրատարակությունը պատրաստելիս նման թերություններից ու աղավաղումներից խուսափելու համար մեր կարծիքով, անհրաժեշտ է նախ պարզել Պարոնյանի կենսագրության հետ կապված հանգուցային հարցերը, և հատկապես թվականների ճշգրտությամբ պետք է ցույց տալ, թե ո՞ր թվականներին ինչպիսի պարբերականներ է խմբագրել նա, կամ երբ որ թերթերին է աշխատակցել, պարզել հիմնական երկերի գրման և հրատարակման թվականները, հարցեր, որոնք մինչև այժմ ոչ ոքի

չեն զբաղեցրել և որոնք անպայման կօգնեն Պարոնյանի գրական ժառանգության հավաքման ու ճշտման գործին:

Երկրորդ, անհրաժեշտ է, բանասիրական-գիտական զգույշ աշխատանքի միջոցով պարզել և հիմնավորել, թե անստորագիր և տարբեր ծածկանուններով լույս տեսած երկերից որոնք են պատկանում Պարոնյանի գրչին:

Պարոնյանի կենսագրության հարցը համարելով առանձին ուսումնասիրության նյութ, ներկա հոդվածով մենք ցանկանում ենք, որքան կներեն մեր ուժերը, կանգ առնել երկրորդ խնդրի վրա:

Մեր անցյալի բոլոր հայ հեղինակների, առավել ևս սուլթանական թյուրքիայի պայմաններում ապրող հայ գրողների համար մեծ դժվարությունների հետ էր կապված գրական երկի լույս ընծայումը: Առանձին գրքով կամ հատորներով հրապարակ գալը հանդիպում էր բազմաթիվ արգելքների ու խոչընդոտների: Ընդհանուր առմամբ աշխատությունները լույս էին տեսնում մամուլում: Այս ճակատագրին էր մատնված և Պարոնյանը, որի ստեղծագործությունները, չնչին բացառությամբ, ցրված են իր հրատարակված երգիծական հանդեսների և այլ մամուլի մեջ:

Պարոնյանը, մոտ երկու տասնամյակ զբաղվել է հրապարակախոսական աշխատանքով, խմբագրել կամ աշխատակցել է բազմաթիվ պարբերականների՝ «Փող առավոտյան», «Եփրատ», «Մեղու», «Թատրոն», «Մասիս», «Լույս», «Փորձ», «Փարոս Հայաստանի», «Արձագանք», «Ծիծաղ», «Խիկար»: Աշխատակցել է նմանապես մի շարք հայատառ թուրքերեն թերթերի՝ «Մանգոմեյի էֆքյար», «Ճերիտեի շարքիյե» և այլն:

Ինչպես տեսնում ենք բավականաչափ ցրված է Պարոնյանի ժառանգությունը և դժվար է հավակնություն ունենալ տարբեր հրատարակությունների մեջ տպված այս բազմապիսի նյութերը հավաքել ամբողջությամբ, մանավանդ որ վերոհիշյալ պարբերականներից մի քանիսը չկան մեր գրադարանների հավաքածուներում:

Այն երկերը, որոնք Պարոնյանը գրել է և տպագրել ոչ իր խմբագրած պարբերականներում, գերազանցապես ստորագրված են ծածկանուններով, իսկ այն երկերը, որոնք լույս են տեսել իր հանդեսների մեջ կամ ծածկանուններով են և կամ անստորագիր:

Արդ, նախ պետք է ճշտել անստորագիր տպված հարյուրավոր նյութերից Պարոնյանի սեփական գործերը և երկրորդ տարբեր ստորագրությամբ լույս տեսածներից՝ Պարոնյանի գրչին պատկանողները, այլ խոսքով որոշել նրա ծածկանունների ցանկը:

Մամուլի մեջ Պարոնյանը, կարելի է ասել, որ իր ստորագրությունը համարյա չի գործածել¹: Նրա հայտնի աշխատություններից «Բաղդասար աղբար»-ը լույս է տեսել անստորագիր: Անստորագիր է լույս տեսել անմահ «Ազգային ջոջերի» զգալի մասը:

Ծածկանուններով հանգես գալը հեղինակի քմահաճ կամեցողության և կամ սլատահականության արդյունք չէր, այլ լուրջ և հիմնավորված անհրա-

¹ Մեր տրամադրության տակ եղած բոլոր նյութերից միայն «Մասիսի» 1878 թ. փետրվար ամսվա համարներում տպագրված «Կսմիթներ»-ի, «Թատրոնի» 1874 թ. սեպտեմբերի, ինչպես և «Մեղու»-ի 1871 թ. մայիսի համարների մեջ տպագրված նյութերի տակ է ստորագրված Լ. Ն. Պարոնյան:

ժեշտություն, կապված ժամանակի քաղաքական-հասարակական պայմաններին հետ:

Ծածկանունների գործածությունը՝ կառավարության, ազգային մարմինների և զանազան քաղաքական-հասարակական դեմքերի հալածանքներից խուսափելու թեև թույլ, բայց այնուամենայնիվ միջոցներից մեկն էր: Լուրջ պատճառներից մեկն էլ այն էր, որ Պարոնյանը վճռական պայքար մղելով գրական խոտանի, անբովանդակ ու գեղարվեստական արժեքներից զուրկ երկերի դեմ, չէր կարող իր խմբագրած պարբերականներում տեղ տալ գրական այն գաճաճներին, որոնց հանդիպում էր նա ամեն քայլափոխում: Ուստի, ինքը լինելով իր հրատարակած պարբերականների միակ աշխատակիցը, հարկադրված էր պարբերականի նույն համարում տպած իր երկերը ստորագրել տարբեր ծածկանուններով և կամ հանդես գալ անստորագիր նյութերով:

Մեր պնդումներին իբրև ապացույց կարող է ծառայել Պարոնյանի վկայությունը այն մասին, որ իր թերթի էջերը ինքն է լցրել՝ «...իր բե Այվազին պես ուրիշներու օգնությամբ կարողին մեր թերթը լեցնելու համար, իբր բե րնթերցող մեզ շնանչնային մեր ոճեն»¹:

Թվով մի քանի տասնյակների է հասնում Պարոնյանի ծածկանունների քանակը: Հայ գրականության մեջ մինչև այժմ չի եղել որևէ ուսումնասիրություն, նվիրված նրանց պարզաբանմանը: Ճիշտ է, այդ ծածկանուններով լույս տեսած երկերի մեծ մասը զետեղված են Պարոնյանի երկերի ժողովածուի հատորների մեջ, սակայն նրանք ներկայացված են առանց որևէ գիտական հիմնավորման, չի ցույց տրված, օրինակ՝ թե արդյոք Նետ, Դետ, Ապտակոդ, Փայլակ և այլ ծածկանուններ Պարոնյանի՞ն են:

«Մեղվի» մեջ Պարոնյանի երկերի մեծագույն մասը լույս է տեսել անստորագիր, իսկ մի մասը հետևյալ ծածկանուններով՝ Մեղու, Անանուն, Ես, Դուն, Անիկա, Ով է նե, Քամ:

Ծածկանուններով անհամեմատ ավելի հարուստ է «Թատրոնը»², ուր տպագրված նյութերի փոքր մասն են անստորագիր: Հիշատակենք այդ ծածկանուններից մի քանիսը՝ Խիկար, Հուշարար, Ա. Ն. Պ., Ապտակոդ, Փշող, Թատրոն, Սպինոզ, Սպինֆա, Փայլակ, Դետ, Հեռադետ ոմն, Հեռադետ, Արգոս, Ջայլամ, Որոտումն, Նետ, Լինկունկ, Կայծակ, Փոքորիկ, Արփիլիֆոս, Վահանաձուկ և այլն:

«Խիկար»-ի մեջ նույնպես օգտագործված են ծածկանուններ՝ Զանգակ, Բելիար, Խիկար, Կայծոռիկ, Եսբեր, Օտր Սելց, Դուն, Անիկա և այլն:

Պարոնյանի թե՛ անստորագիր և թե՛ ծածկանուններով լույս տեսած երկերի որոշման ժամանակ ամենից առաջ պետք է ելակետ ունենալ մեծ երգիծաբանին միայն հատուկ, ուրույն և ինքնատիպ ոճը, այլ խոսքով պարոնյանական երգիծանքի առանձնահատկությունները, որոնցով նա իսկույն զանազանվում է այլ հեղինակներից:

Պարոնյանի իբրև ստեղծագործողի գլխավոր հատկանիշը նրա ռեալիստական արվեստի խորը դեմոկրատիզմն է, որը թափանցված է հեղինակի եր-

¹ «Մեղու», 1873, № 173:

² «Թատրոնը» լույս է տեսել 1874—1877 թթ., իսկ մեղ մոտ կա միայն 1873 թ. օգոստոս ամսից մինչև 1877 թ. հունիս ամիսը ներառյալ: Նախորդ շրջանից 1874 թվականից կան մի քանի համարներ միայն: Պետք է ենթադրել, որ եթե կոմպլեկտը լրիվ լիներ, կհանգրիպեինք և այլ ծածկանունների:

կերի մեջ և ելակետ է հանգիսացել դարաշրջանի քաղաքական-հասարակական երևույթների նկատմամբ նրա հանգած եզրակացությունների համար:

Պարոնյանի երկրորդ հատկանիշը, նրա անսպառ սրամտությունն է, առողջ ծիծաղը, առանց մաղձի ու դառնության, առանց ավելորդաբանությունների ու ցինիզմի: Այս առումով նա բացառիկ զուսպ, չափի գիտակցությունը ղգացող հավասարակշռված հեղինակ է:

Պարոնյանի արվեստի մյուս հատկանիշը, մեծ երգիծաբանի մտքի զարմանալի ճկունությունն է, որը միահյուսված լեզվական մեծ կոլտուրայի հետ, նրա ոճը դարձրել է առավել սուր, դիպուկ և նպատակասլաց:

2. Պարոնյանին բազմակողմանիորեն ուսումնասիրողը չի կարող այլ գրողի որևէ երկը շփոթել նրա գործերի հետ: Փոքրածավալ, մի քանի տողերից կազմված նյութերի, լրագրական սովորական հայտարարությունների մեջ անգամ Պարոնյանը մատնում է իրեն: Այս է Պարոնյանի երգիծանքի մեծ ուժը, ինքնատիպությունը և մենք նրա ծածկանունները պարզելու փորձն անելիս ամենից առաջ ելակետ ենք ընդունել վերոհիշյալ հատկանիշները:

Ինչպես նշեցինք «Մեղվի» մեջ Պարոնյանը մեծ մասամբ հանդես է եկել անստորագիր նյութերով, իսկ համեմատաբար փոքր տոկոս կազմող մեր թվարկած բոլոր ծածկանունները անվերապահորեն պատկանում են Պարոնյանին: Բացի ոճական հատկանիշներից, առաջ քաշված հարցերի ու նրանց տրված լուծման ընդհանրությունից, բացի պարոնյանական երգիծանքին հատուկ սրությունից, բանասիրական որոշ տվյալներ ևս հիմնավորում են մեր կարծիքը:

Գրականության համար ստուգված հարց է, որ Մեղու ծածկանունը Պարոնյանինն է: Այս փաստը ինքնին հնարավորություն է ընձեռում պարզելու մի շարք այլ ծածկանուններ: «Մեղվի» մեջ հաճախակի հանդիպում ենք Սս, Դուն, Անիկա կեղծանուններին, որոնք գրված են առանձին-առանձին՝ տարբեր հոգվածների տակ: Սակայն հոգվածներից մեկի մեջ հեղինակը շատ սրամիտ կերպով ինքը լուծում է դերանունների այս գաղտնիքը, այդ հոգվածի տակ ստորագրելով երեք դերանունները միասին, իսկ ամենավերջում ավելացնելով՝ Մեղու: Ստորագրությունների այս ձևի կիրառման նպատակն է դերանունները հավասարեցնել վերջինին, այսինքն՝ Մեղուին, որը և ինքն է:

«Մեղվի» գործածական ծածկանուններից է Ով է նե, որը մեծ մասամբ դրված է «Սուրհանդակ Մեղվի» հոգվածաշարքի տակ: Այս ստորագրությամբ են պարոնյանական յումորով ու սրամտությամբ հագեցված այն հայտնի աֆորիզմներն ու դիալոգները, որոնք իրավամբ միշտ վերագրվել են Պարոնյանին: Բերենք մի քանի նմուշներ:

«— Ի՞նչ է մարդուս կենաց անցյալը,

— Ներկա հայելի մը, որ շատ անգամ մեր ապագան մեզ կցուցնե»:

«— Ի՞նչ է դժբախտություն մը.

— Մեր ճշմարիտ բարեկամները մեր շողոքորթներեն որոշել տվող միակ միջոցը»:

«— Ի՞նչ է ստակը.

— Օրագրո խմբագիրը»:

Բացի այս բոլորից Պարոնյանը ինչպես հաճախ, նույնպես և այդ դեպքում ինքն է հնարավորություններ ստեղծում ծածկանունների բացահայտման համար, ընթերցողի ուշադրությունը հատկապես սեռեցնելով տվյալ անվան վրա: Տեղեկագիր № 6—5

«— Մեղո՛ւ, սա «Ով է նե»-ն ով է նե՝ ինձի չճշե՛ս», հարցնում է նա և պատասխանում։

— «Ինչուդ պետք»,— ականարկելով, որ Ով է նե-ն Մեղուն է։

Հետաքրքիր ձևով վերածվում է Անանուն ծածկանունը։ «Մեղվի» մեջ մենք հանդիպում ենք «Ապտակք» վերնագրին՝ Անանուն ստորագրությամբ։ Հետագայում «Թատրոնի» մեջ այս վերնագիրը վերափոխվել է Ապտակող ստորագրության, որը դրված է Պարոնյանի գրչին պատկանող հանրահայտ նյութերի տակ։

Պարոնյանի համար կեղծանունների մեջ քողարկվելու այս խաղերը պատահական չեն։ Հետագայում ևս առիթներ կլինեն նման պրիոմների մեջ տեսնելու Պարոնյանին։

«Մեղվի» ծածկանուններից է Քամը, որով հեղինակը տարիներ անց հանդես եկավ Ա. Հովհաննիսյանի «Արձագանք»-ի մեջ իր «Ծիծաղներ» ընդհանուր վերնագրին ունեցող ֆելյետոններով, որոնք ըստ էության շարունակությունն էին «Փորձում» և «Փարոս Հայաստանիում» Հոսհոս և Լուսարար ծածկանուններով լույս տեսած երկերի։

Անհամեմատ ավելի հեշտ է պարզել «Թատրոնում» Պարոնյանի գործածած ծածկանունները։

Նախ՝ այն ծածկանունները, որոնցով լույս են տեսել Պարոնյանի երգիծական պորտրետները, անառարկելիորեն Պարոնյանին են, որովհետև հետագայում նա այդ բոլորը առանձին հատորով հրատարակեց «Աղգային ջոջեր» ընդհանուր վերնագրով, իր սեփական ստորագրությամբ։ Այդ ծածկանուններից է «Հուշարարը», որով ստորագրված է «Տոբտոր Ռուսիայան» երգիծական պորտրետներ։ Այդ արժեքավոր երկը դուրս էր մնացել «Աղգային ջոջերի» հրատարակություններից և միայն վերջին տարիներս լույս տեսավ «Գրական թերթում» ընկ. Ս. Բագյանի համառոտ ծանոթագրությամբ։

«Աղգային ջոջերից»՝ Տերոյենցին նվիրված հայտնի հատվածը նախօրոք լույս է տեսել «Թատրոնում» Ա. Ն. Պ. ծածկանունով, որի վերջին տառը հավանաբար Պարոնյան ազգանվան սկզբնատառն է։ Կնշանակի, նույն Ա. Ն. Պ. ծածկանունով այն նյութերը, որոնց մենք՝ հանդիպում ենք. «Թատրոնում» նույնպես վստահորեն Պարոնյանին են։

Պարոնյանը ժամանակակիցներից ոչ ոքի այնքան ոչնչացնող ծաղրի չի ենթարկել, որքան լիբերալ «Մամուլ» երգիծաթերթի խմբագիր Գ. Այվազյանին։ Նա հետևողականորեն «Մեղվի» և «Թատրոնի» էջերից պոլիմիկական սուր պայքար է մղել Այվազյանի դեմ, խարազանել է նրա ռեակցիոն աշխարհայացքը և հատկապես մեծատների ու դրամատիկների առաջ քծնող «Այվազի» (ծառա) նկարագիրը։ Պարոնյանը մերկացրել է «Մամուլի» անսկզբունք, ինքնուրույնությունից զուրկ վարքագիծը։ Նկատի ունենալով Այվազյանի մտավոր սնանկությունն ու համառությունը, Պարոնյանը կատարել է խիստ համեմատություններ, հաճախ զուգադրելով նրան ավանակի հետ։

Բազմաթիվ նյութերի՝ ընդարձակ հոդվածների, թե փոքրիկ հաղորդումների և կամ երգիծական ռեպլիկաների մեջ ցրված է Այվազյանի նկարագիրը։ Այսպես օրինակ.

«Ինչպես որ Այվազը գարին տեսած ժամանակը ականջները խաղացնելով

ու ցատկելով կուրախանա, այնպես ալ «Մեղուն» երբ կտեսնե, որ Այվազը համառությունը ձգած շիտակ ճամբեն կընթանա, հանչափ կուրախանա»¹։

Եվ կամ

«Մամլո շաբաթ ավուր թերթին վրա դարիին գինը երկու դրուշ ավելցավ»²։

Բացի թվարկած օրինակներից, եթե վերհիշենք Այվազյանի նկարագիրը՝ տրված Պարոնյանի կողմից տարբեր առիթներով, ապա դժվար չէ համոզվել, որ նկարագրի մի փոքրիկ մասնիկն է այն բացատրականը՝ «Այվազիկ-ապուշ», որ տպված է «Թատրոնի» «Բառարան կանանց»-ի մեջ և կրում է Դետ ստորագրությունը։ Օգտագործել այս իբրև ապացույց, թե Դետը Պարոնյանն է, կարող է համարվել ինքնին շնչին փաստ, բայց Դետ ստորագրությամբ լույս տեսած նյութերում Պարոնյանին տեսնել կարելի է ամեն քայլափոխում, երգիծական բացականչությունների, փակագծում արված դիտողությունների, և մինչև իսկ ցենզուրային խստություններից հարկադրված էջեր լցնող կետադրությունների շարքերի մեջ։ Բացի այս, Դետի նյութերը, որոնք լույս են տեսել «Թատրոնում»՝ «Խոսակցություն կանանց», «Բառարան կանանց», «Բամբասանք կանանց» ընդհանուր վերնագրի տակ, կենցաղային-ընտանեկան նյութերի այն աննման շարքն են կազմում, որոնց մեջ առկայծել է Պարոնյանի դիտողականությունն ու կյանքի երևույթների մեջ թափանցելու զարմանալի հմտությունը։ Այս բոլորը վերարտադրված են առանց ավելորդության ու ձգձգումների, առանց բնականի խեղաթյուրման, ճշտությամբ, բայց և ստեղծագործական որոշ հիպերբոլայով, որի մեջ առաջին հերթին գերազանցում է պարոնյանական երգիծանքի վարակիչ ու անժխտելի ուժը։ Եվ միանգամայն իրավացիորեն Դետ ստորագրությամբ լույս տեսած երկերի մեծ մասը ամփոփված է Պարոնյանի երկերի ժողովածուում։

Պարոնյանի ծածկանունների ստուգման հարցում հաճախ մի անվան ճշտումը առիթ է հանդիսանում հայտնաբերելու մի երկրորդը, երրորդը։ Պանոթանալով հեղինակի ստեղծագործական պրիոմներին, կեղծանունների մեջ քողարկվելու ձևերին. հեղինակին գտնելը դառնում է առավել հնարավոր։

Այսպես, օրինակ՝ մեր ուշադրությունը գրավեց Լիսկլունկ ստորագրությամբ «Թատրոնի» 1877 թ. հունվ. 13-ի մեջ տպագրված «Զեզեկի մը զեզեկությունը» վերնագրով հոգվածը, որտեղ պաշտպանության տակ է առնվում Դետ-ը։ Հոգվածում ասված է. «Կցավիմ, որ Վենետիկի վանքերուն մեջ ձրի ուտել խմելով միայն իմաստակություն սորվող երիտասարդ մը Դետը ճանաչելով՝ հրապարակով՝ ձեր այդ գրածները զեզեկի գրվածներ են կըսե կոր և իրոք ալ այդպես է ըսեր է»։

«Այդ իմաստակին ըսած զեզեկ բառը ոչ թե Դետ-ի այլ իմաստակին կվերաբերվի, որ թե իր անունը հանիրավի մեր Դետին կուտա և թե մեր ընտանեական և բազմաց թյուրահասկանալի լեզուն զեզեկություն կանվանե... բայց պետք էր գիտնալ, որ Դետը անոնցմե է, որք գիտեն ընդհանուրին իրավացի շահը մասնավորի մը անիրավ շահուն չի զոհել»։

Այս ամբողջ հատվածը ցույց է տալիս, որ Պարոնյանը օգտագործելով մի նոր ծածկանուն՝ Լիսկլունկ հարվածում է իր հակառակորդներին։

«Թատրոնի» 1876 թվականի հոկտեմբերի 6-ի և 9-ի համարների մեջ տպագրված են «Խոսակցություն կանանց» վերնագրով նյութեր, Դետ ստորագրու-

¹ Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11, էջ 156։

² Նույն տեղում, էջ 148։

թյամբ: Նույն վերնագրով նյութերի հանդիպում ենք «Թատրոնի» 1877 թ. հունվարի 22-ի, 1877 թ. փետրվարի 5-ի և 1877 թ. փետրվարի 12-ի համարների մեջ, որոնցից առաջինը ստորագրված է Ուոտսոն, երկրորդն անստորագիր է, իսկ երրորդը ստորագրված է Կայծակ: Այս անունները և անստորագիր նյութը Պարոնյանին վերագրելու համար նոր փաստերի կարիք չկա, երբ գիտենք, որ Գետը Պարոնյանն է: Նա այս դեպքում ընդհանուր վերնագիր ունեցող նյութերի տակ, որոնք բոլորը գրված են նույն ոճով ու սրամիտ համեմատություններով, հանդես է եկել տարբեր անուններով՝ բազմազանություն և հետաքրքրություն առաջացնելու համար:

«Թատրոնի» համարների մեջ հանդիպում ենք նաև Փայլակ ստորագրության:

1876 թ. № 188-ի մեջ այդ ստորագրությամբ տպագրված է «Տեսնողին մեծ վարձատրություն» վերնագրով մի փոքրիկ նյութ, ուր ծաղրված են ժամանակակից քաղաքական և կենցաղային բարքերը, ի միջի այլոց և սուլթանական Թյուրքիայի ցենզուրային խստությունները, հետևյալ ձևով.

«Թատրոնի խմբագրին շաբաթը գոնե մեկ երկու անգամ տպագրության տեսչության կողմանե չկանչվիր»:

«Թատրոնի» խմբագիրը Պարոնյանն էր և հայտնի են այն հալածանքները, որին ենթարկվել է Պարոնյանը ցենզուրային մարմինների կողմից: Ամենայն հավանականությամբ խմբագիրը իր դառը փորձը նկատի ունենալով ակնարկում է ինքն իրեն, Փայլակ ստորագրությամբ:

Պարոնյանի ամենաշատ օգտագործած ստորագրություններից է Սպինսը: Այդ ծածկանունով տպագրված են «Թատրոնի» 1876 թ. № 188-ի մեջ «Հարց և պատասխան» խիստ սրամիտ զրույցները, որոնցից մեկը հատկապես ուշագրավ է մեզ հետաքրքրող հարցի լուսաբանման համար:

«— Ոսկեդարը երբ պիտի ծագի, որ կարենան մարդիկ խաղաղությամբ կյանք վարել աշխարհիս վերա»:

— Երբ որ «Գրյուպի, Շնայտրի և Մարթինի — Հանրի»-ի գործարանները բնաջինջ ըլլալով, Անտրասիներու, Պիզամարկներու, Կորչագոֆներու նոթաները՝ Վերտիի և Մեյերպերի նոթաներուն փոխվին»:

Բավական է ուշադրությամբ կարդալ այս տողերը, թափանցել բառախաղերով համեմված քաղաքական սուր երգիծանքի՝ մեջ, ուղղված եվրոպական տերությունների ուղղամուլ գործիչների դեմ, տեսնելու համար Պարոնյանի քաղաքական սատիրայի հետևողական ուղին, ժամանակակից միջազգային հարցերի և հասարակական դեմքերի գնահատման հարցերում:

Վերը բերված օրինակներից պարզվեց («Ազգային ջոջեր», «Խոսակցություն կանանց»), որ Պարոնյանը հեղինակային ինքնությունը անհայտ պահելու համար նույն վերնագիրը ունեցող նյութերի տակ անգամ գործածել է տարբեր ստորագրություններ: Բացի այդ, նրա ստեղծագործության առանձնահատկություններից է նույն հարցերին՝ քաղաքական թե կենցաղային դեպքեր, անդրադառնալ այլ և այլ ձևերով, հակիրճ նկարագրություններով, երգիծական ռեպրիկաներով, ամբողջացնելով ու խորացնելով իր հետապնդած հարցը:

«Թատրոնի» 1877 թ. փետր. 26-ի համարի մեջ կան սրամիտ դիտողություններ դարձյալ «Հարց պատասխանի» վերնագրով, նվիրված ժամանակակից կյանքի քաղաքական դեպքերին ու կենցաղային հարցերին: Ահա այդ նույն վերնագրի տակ մենք հանդիպում ենք հետևյալ տողերին:

«Հ. — Սրբազան պապը մեռնելեն ետքը, ով պիտի հաջորդե անոր:

Պ. — Նվիրական կարգին մեջ ամենեն հինը:

— Ով:

— Չամուռճյան պատվելին»:

Եթե վերհիշենք «Ազգային ջոջերում» Տերոյենցի մասին գրված հատկապես այն տողերը, որով ծաղրված են նրա կրոնական ֆանատիզմը, ապա կտեսնենք, որ այս փոքր հատվածը, ոչ այլ ինչ է, եթե ոչ լրացում, ամբողջացում Չամուռճյանի նկարագրին, այն տարբերությամբ, որ առաջին դեպքում Պարոնյանը հանդես է եկել Ա. Ն. Պ. կեղծանունով, իսկ այստեղ՝ Փոքրիկ ծածկանունով:

Կենդանական աշխարհի միջոցով, քաղաքական հարցերին անդրադառնալը Պարոնյանի ստեղծագործության առանձնահատկությունն է: Բավական է հիշել նրա «Միծաղը», ուր լայն շափերով ընդգրկված են ժամանակի հասարակական կյանքն հուզող բազմաթիվ խնդիրներ, և որտեղ գործող անձինք միայն կենդանիներն են:

Ամենայն հավանականությամբ Վահանաձուկ ծածկանունը նույնպես Պարոնյանինն է: Այդ ստորագրությունը դրված է մի այնպիսի նյութի տակ, որի մեջ նկարագրելով ձկների բողոքը իրենց կյանքի անապահովության դեմ, հեղինակը ցանկացել է անդրադառնալ արևելյան խնդրին, մի բան, որ Պարոնյանի սիրած երգիծական միջոցներից մեկն էր:

«Խիկար»-ի 1887 թ. հունվար ամսվա համարի մեջ կա նևս վերնագրով հոդված, ուր անհայտ հոդվածագիրը պատասխանում է Իզմիրից ստացած նամակի, որը բողոքում է «Խիկար» թերթի վատ առաքման համար: Հոդվածագիրը հանդես է գալիս ի պաշտպանություն «Խիկարի» և բացատրում, որ առաքումները կատարվել են ժամանակին:

«Խիկարի» խմբագիրը Պարոնյանն էր, նա էր իրավասուն թերթի հետ կապված ամեն կարգի հարցերին պատասխանելու, հետևապես այդ նյութի հեղինակը, անշուշտ ինքն է: Հոդվածի վերջին մասը ճշտում է ենթադրությունը: Հոդվածագիրը դիմում է նամակի հեղինակին և ասում. «Ի՞նչ, եղբայր, կարոտ եք Խիկարին, որ ձեր քաղաքավարական եղանակն կրնա բարեփոխել և, հետևապես օր մը փրկել զձեզ թուրք մը կամ ծեծե մը, որովհետև քիչ մը դժվար է ամեն տեղ Պարոնյաններու պես մարդոց հանդիպել»:

Այս բոլորից հետո դժվար չէ համոզվել, որ «Խիկարի» մեջ նետ վերնագրով անստորագիր նյութերը պատկանում են Պարոնյանին, որը «Թատրոնի» մեջ հանդես է եկել նետ ծածկանունով:

«Խիկարի» մեջ հանդիպում ենք Օտր Սելց ստորագրության: Այդ ծածկանունով լույս տեսած հոդվածներից մեկը տպագրված է 1885 թ. մարտ ամսվա համարում և կոչվում է «Մորթ կարծրացնող նոր հեղուկ մը»:

Ամբողջ հոդվածը երգիծական սուր արվեստով հագեցած ծաղր է ուղղված եվրոպական ներմուծում հանդիսացող ապրանքների պրոպագանդայի դեմ, որ վատարվում էր լիբերալ հայ մամուլում: Անկախ այն հանգամանքից, որ Պարոնյանին կարելի է ճանաչել առաջին իսկ տողերից, տեսնել մեծ երգիծաբանի դրական յուրահատկությունները, այս հոդվածի վերջին հատվածը ևս կողմնակի ձևով ընթերցողին բացահայտում է հեղինակի ինքնությունը:

«Եղրակացնելով կրսեմ, սիրելի բարեկամ, քանի որ Խիկարի հրատարակչությունը հաստատ միտքդ դրած ես, եթե հաջողիլ կուզես, պետք է որ պզտիկ

սրվակ մ'ալ դու ունենաս սույն հեղուկեն, տպագրիչիդ և թղթավաճառիդ հետ ավելի մտերմորեն տեսնվելու համար»...

Բնչպես նշեցինք ուսումնասիրության սկզբում, մեր թվարկած ծածկանուններով լույս տեսած երկերի մի մասը զետեղված է Պարոնյանի լիակատար ժողովածուի մեջ, բայց մի շարք գործեր, որոնք նույնպես լույս են տեսել տարբեր ծածկանուններով, դուրս են մնացել հատորներից: Մենք նկատի ունենք Լուսարար, Քամ և Ծսթեր ծածկանուններով մամուլում լույս տեսած երկերը և Ծս ստորագրությամբ այն երկերը, որոնք մինչև հիմա մնում են մամուլի էջերում:

Լուսարար ստորագրությամբ Պարոնյանը մի շարք թղթակցություններ տպել է՝ Մոսկվայում հրատարակվող «Փարոս Հայաստանի» պարբերականում, «Լուսարարի նամակները» ընդհանուր վերնագրով:

Բանասիրական որևէ փաստարկման կարիք չկա ցույց տալու համար, թե Լուսարարի նամակները Պարոնյանին են, այնքան օրգանական ամբողջություն են կազմում նրանք «Հոսհոսի ձեռատետրի» հետ: Բայց և այնպես, ունենք և Մ. Բարխուդարյանի վկայությունը: Նա իր հրատարակած «Հանդես գրականական և պատմական»-ի 5-րդ հատորում տպագրելով այդ նամակներից վերջինը՝ Հ. Պարոնյան ստորագրությամբ, տալիս է հետևյալ ծանոթությունը:

«Հանգուցյալ Հակոբ Պարոնյանը աշխատակցում էր յուր ժամանակին «Փարոս Հայաստանի» պատկերազարդ հրատարակության: Այս անտիպ նամակը մենք ստացանք մեծ. պ. Մսերյանից, որին և հայտնում ենք մեր շնորհակալությունը»:

Առավել հետաքրքրական են Ծսթեր ստորագրությամբ լույս տեսած երկերը, որոնք մինչև այժմ չեն վերագրվել Պարոնյանին և նրան նվիրված աշխատություններում ակնարկ անգամ չկա, թե մեծ երգիծաբանը այդպիսի ստորագրություն է գործածել:

Բանասիրական ուսումնասիրությունը մեզ բերեց այն համոզման, որ Ծսթերը Պարոնյանի ծածկանուններից մեկն է, որով նա հանդես է եկել «Խիկարում» տպագրված երեք հոդվածով: Նրանցից մեկը հատկապես, շատ արժեքավոր մի քննադատական է, նվիրված Պարոնյանի «Բաղդասար աղբար» կոմեդիային:

Մյուս երկու հոդվածներն են «Դանիել մը որ կը գրադատե», «Նամակաց խնդիրը»:

Գրականության պատմությունից մեզ հայտնի է, որ արևմտահայ իրականության մեջ Ծսթեր անունով կին գրող գոյություն չի ունեցել: Հետևաբար Ծսթերը ծածկանուն է, այն էլ այնպիսի մարդու, որն ընդհանրապես աշխատակցել է Պարոնյանի «Խիկար»-ին:

Ով էր ուրեմն Ծսթերը:

Այս հարցին պատասխանելու համար մեր տրամադրության տակ կա միայն մի աղբյուր, Ծսթեր ստորագրությամբ տպված երեք նյութերը:

Նախ ծանոթանանք «Դանիել մը, որ կը գրադատե» հոդվածին, որ ուշագրավ աշխատություն է, նվիրված հայոց լեզվի մաքրությանը: Հեղինակը քննադատության է ենթարկում ժամանակակից գրական լեզուն: Քննադատության անմիջական առարկան ու դրդապատճառը «Արևելքի» մեջ տպագրված

Տ. Մ. Զ-ի, [այսինքն՝ Տիար Մինաս Զերազի], եվրոպա կատարած ուղևորության նկարագրության լեզուն և ոճն է։

Պարոնյանը ինչպես մյուս աշխատանքների մեջ, այստեղ ևս հանգես է գալիս որպես մեծ ռեալիստ։ Սուր քննադատության ենթարկելով լիթերալ Զերազի ոճը, նա գրողից և գրականագետից պահանջում է գեղեցիկը տեսնել միայն «ճշմարիտին» մեջ։

Հոգվածի հիմնական բովանդակության և նրա հարակից հարցերի լուծման հստակությունը, մտքի սրությունն ու երգիծանքի ուժը կասկածից վեր են դարձնում, որ նրա հեղինակը Պարոնյանն է։

Եսթերի հաջորդ հոգվածը՝ «Նամակաց խնդիրը» նվազ սրամտությամբ քան նախորդը, բայց բովանդակությամբ հետաքրքիր փոքրիկ դիտողություն է կենցաղային հարցերի շուրջը։

Եսթերի երրորդ հոգվածը «Բաղդասար աղբար»-ին նվիրված վերոհիշյալ քննադատականն է, ուր առավել որոշակիությամբ բացահայտվում է նրա հեղինակի ինքնությունը։

Քննադատությունն սկսվում է փոքրիկ նախաբանով, որով հոգվածագիրը դիմում է հասարակությանը, որպես կին համահավասար իրավունքներ պահանջելով իր կարծիքն հրապարակով հայտնելու համար։

Հեղինակը ուսումնասիրության առաջին բաժնում քննադատության է ենթարկում «Բաղդասար աղբար» կոմեդիայում հանդես բերված գործող անձներին, հատկապես Անուշին և Բաղդասարին, երկրորդում՝ կատակերգության կոմպոզիցիոն հարցերը, իսկ երրորդում՝ «Բաղդասար աղբար»-ի բարոյական բովանդակությունը։

Վերլուծելով «Բաղդասար աղբոր» բարոյական իմաստը, քննադատը այդ կապակցությամբ մատնացուցում է կատակերգության «նոտություններ»-ը, վերադառնալով է բավական հանգամանորեն և նրանց գնահատման մեջ է, որ գծագրվում է, «Բաղդասար աղբոր» հեղինակի դեմքը։

Ինչպես է բացատրում Եսթերը կատակերգության գաղափարական կողմը. նա, թվում է, թե Բաղդասարի ապրած ամբողջ տրագեդիան համարում է արդյունք անհամապատասխան ամուսնության։

«... Եթե Բաղդասար մ'ես,— գրում է նա,— և Անուշի պես կին մ'ունիս, շատոնց խղճալի ես, և ինչ որ ալ լինի, Անուշի խոսքերն որքան ալ անվայել լինի Բաղդասարի երեսին դեմ ըսելով, նվազ ճշմարիտ չեն և այսքան անհարմար ամուսնություն մը ընկերական մեծ թշվառություն մ' է, որմե ծնողք, պարտ են ազատել իրենց դստերը։ Լավ է աղջիկը վանք մտնե, քան թե յուր բարոյական վիճակին չհամապատասխանող մարդու մը հետ ամուսնանա»։

Այս բոլորը արտաքին կողմն է։ Հոգվածի շարունակության մեջ տեսնում ենք, որ Պարոնյան ստեղծագործողի և Պարոնյան քննադատի մեջ հասարակական բարքերի ըմբռնման ու նրանց վերագնահատման հարցերում ոչ մի տարբերություն չկա։

Քննադատը այստեղ ևս առիթը օգտագործում է իրեն հատուկ հետևողականությամբ խարազանելու ազգային վարչական մարմինների ներկայացուցիչներին, արժեքավորելով կատակերգության այն տեսարանները, ուր ծաղրված են դատաստանական խորհրդի անգամները, և այդպիսով ստեղծված վի-

ճակի ամբողջ պատասխանատվությունը ծանրացնելով հասարակական կարգերի վրա:

Մեր նպատակից դուրս լինելով այս շատ արժեքավոր երկի բովանդակության քննությունը, կանգ կառնենք բանասիրական մի քանի տվյալների վրա, որոնք կնպաստեն այդ ծածկանվան բացահայտմանը:

Սեփական երկրի քննադատությամբ հանդես գալու երևույթը գրականության պատմության մեջ բացառիկ դեպք չէ: Հիշենք Ն. Գոգոլի քննադատականը «Размышление после спектакля» նվիրված «Ռեկվորին»: Հայ գրականությունից հիշենք Մ. Մեծարենցի «Ինքնադատության փորձ մը» հոդվածը, որտեղ քննության է առնվում իր «Միաժան» ժողովածուն:

Պարոնյանը առավել ևս հիմնավոր պատճառ ուներ հանդես գալու իր երկի քննադատությամբ: Այդ մի միջոց էր աշխուժացում, հետաքրքրություն առաջացնելու ժամանակակից գրական լճացած մթնոլորտում, պրոպագանդելու իր կոմեդիայում բարձրացվող հարցերը:

Երգիծանքը, մտքի ճկունությունն ու սրությունը Պարոնյանի ստեղծագործության հիմնական ատաղձն են: Անկախ ստեղծագործության բնույթից, գեղարվեստական երկ է, թե քննադատական, հրապարակախոսական հոդված, թե քաղաքական մերկացնող ֆելյետոն, ամենուրեք զգացվում է Պարոնյանի անբռնազբոսիկ ծաղրը ժամանակակից հայ ինտելիգենցիայի և նրա մտավոր վաստակի դեմ:

«Բաղդասար աղբար»-ին նվիրված քննադատականի մեջ, դարձյալ նույն Պարոնյանն է, երբ նուրբ կերպով ծաղրում է նորայր Բյուզանդացուն, որի բառարանից օգտվելով ինքը գործածել է «նրբացուցիչ դեպք հանցանաց» («Circumstances atténuantes») հայտնի դարձվածքը: Պարոնյանը այստեղ հետապնդել է երկու նպատակ: Նախ հեգնել Բյուզանդացուն, ցույց տալով իր դժգոհությունը՝ «Պ. Նոյրայրի՝ «նրբացուցիչ դեպքի» մասին և երկրորդ, ընթերցողին ծանոթացնել այդ թևավոր դարձվածքի ծագման հետ:

Անհրաժեշտ է ուշադրության առնել և քննադատական հոդվածի վերջին պարբերությունը:

«Թատերական ճյուղն շատ քիչ կը մշակվի առ մեզ կամ լավ ևս բնավ չի մշակվի: Բայց գրականության մը մեջ այս ճյուղին կարևորությունն անուրանալի է: Փափագելի էր, որ մեր գրագետք այս ճյուղով ալ զբաղվեին ուսումնասիրելու համար ազգային իրողություններ: Տենչալի է մանավանդ, որ Բաղդասար աղբարի հեղինակն նոր կատակերգություններ պարգևեր մեզ՝ հետզհետե և քիչ մը շարժում հառաջ բերեր թատերագրական ասպարեզին մեջ: Արդեն բազումք մեծ անհամբերությամբ կսպասեն յուր նոր գործին, «Պաուզ» անուն կատակերգության զոր խոստացավ մեզ և որուն մեջ հարկավ նոր գեղեցկություններ և ճշմարտություններ տեսնելու բախտը պիտի ունենանք»:

Այս հարցերը նույն ձևով առաջադրված են Պարոնյանի կողմից գրված «Բաղդասար աղբար»-ի տպագրությանը նախորդող հայտարարության մեջ:

«Միտք ունենք ներկա շրջանիս մեջ հրատարակել քանի մը կատակերգություններ, ազգային կյանքն քաղված իրողություններ, որք, եթե ներողամիտ ընթերցողաց ընդունելության արժանանան, պիտի շարունակվին հաջորդ շրջաններու մեջ ևս: Գիտենք թե որքան դժվար է այս ճյուղին մեջ հաջողություն հուսալն, կզգանք թե որքան մեր կարողությունն վեր է այդ ասպարեզն. այնուամենայնիվ նախ՝ ազգին վերքերն քիչ մ'ալ թատերաբեմներու վրա մատ-

նանիշ ընելու փափաքն, և երկրորդ գրական գործոց մասին մեր ազգայնոց ցույց տված անսահման և անհուն ներողամտությունն համարձակություն տվին մեզ բռնաբարել թատրոնի մոտքն: Ներկա թերթին մեջ կսկսինք հրատարակել «Բաղդասար աղբար» անուն կատակերգությունն՝ զոր մասնավորապես ազգային ձեռնհաս մարմնոց ուշադրությանը կը հանձնենք»:

Մեջ բերված հատվածները իրենց բովանդակությամբ նույնն են, բայց մեզ հետաքրքրողը ոչ այնքան բովանդակության նույնությունն է, որքան ընդհանուր ոգին, գրելու ոճը և հատկապես դրամատուրգիայի դերի և նշանակության նույնպիսի գնահատականները:

Մեր ենթադրություններին որպես առավել համոզիչ ապացույց, որ նսթերը Պարոնյանն է, նշենք մի փաստ ևս:

Հոդվածի վերջում քննադատը խոսում է կատակերգության ֆինալի մասին, ցավակցում Բաղդասարի ճակատագրին, չի համաձայնվում հեղինակի հետ, տրված լուծումը համարելով կատակերգությանը անհարիր՝ խիստ հուզիչ, նույնիսկ արտասվաբեր:

«Ահա այս տեսիլն ճիշտ այն է կատակերգության մեջ — ներում կը խընդրեմ հեղինակին, եթե կհամարձակիմ ըսելու զայս — ինչ ինչ որ Պուալո կըսեր Սգապենի պարկին համար երկտող ոտանավորով՝ զոր օր մի միասին կը կարդահինք հեղինակին հետ»:

„Dans ce sac ridicule ou Scapin s’enveloppe
Je ne reconnais plus l’auteur du Misanthrope“.

Առաջին ակնարկից անհասկանալի է մնում, թե ինչու է կատարված այդ անալոգիան, որը կարծեք անմիջական կապ չունի քննադատության հետ: Բայց ըստ էության այդ չափազանց հաջողված մի նուրբ միջոց է, կիրառված հոդվածագրի կողմից, բացանայտելու և միաժամանակ քողարկելու քննադատի ինքնությունը:

Ընթերցողի ուշադրությունը դեպի քննադատը հրավիրում է հատկապես հետևյալ նախադասությունը.

«...զոր օր մի միասին կը կարդայինք հեղինակին հետ», այսինքն՝ Պարոնյանի:

Նախադասությունը միջանկյալ է (ուշադրությունից զերծ պահելու համար) և տրամաբանական ոչ մի անհրաժեշտություն չկա տվյալ պարագայում շեշտելու քննադատի ու «Բաղդասար աղբոր» հեղինակի համատեղ կարդալու հանգամանքը:

Նսթերը պարզապես ցանկացել է մի ավելորդ անգամ անհայտության մեջ պահել իրեն, մեկ ընթերցողը դարձնելով երկու և միաժամանակ այդպիսով օբյեկտիվորեն ուշադրություն հրավիրել իր անձի վրա:

Պարզելով քննադատի նկատառումները, դժվար չէ տեսնել, որ ընթերցողները ոչ թե երկուսն են, այլ միայն մեկը: Իսկ այդ մեկը՝ Պարոնյանն է, կատակերգության հեղինակը:

Առավել հետաքրքիր ձևով է օգտագործված Բուալոյի խոսքերը՝ քննադատի անձը քողարկված կերպով երևան բերելու համար:

«Այս ծիծաղելի պարկում ուր պահված է Սկապենը:

Ես այլևս չեմ ճանաչում Միզանտրոպի հեղինակին»:

Մեջ բերված տողերի նպատակն է շեշտել պահված լինելու և չճանաչվելու

հարցը, հետևությունը պարզ է, այսինքն՝ ինչպես Սկապենը պարկի մեջ, նույնպես և Պարոնյանը պահված է Ծաթերի անվան տակ:

Բուլալոն չկարողացավ ճանաչել «Միզանտրոպի» հեղինակին, բայց նրա տողերի սրամիտ օգտագործման մեջ ճանաչվեց «Բաղդասար աղբար»-ի հեղինակ Հ. Պարոնյանը:

Պարոնյանը դարաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի գնահատման մեջ շատ հարցերում կանգնած է եղել Մ. Նալբանդյանի դիրքերի վրա: Չնայած գաղափարական այդ սերտ մոտիկությունն ու կապերին, չնայած այն հանգամանքին, որ Պարոնյանի մասին գրողները հաճախ են նշել այդ ճշմարտությունը, սակայն փաստ է, որ Պարոնյանը իր ստեղծագործությունների մեջ առհասարակ քիչ է խոսել Նալբանդյանի մասին: Մինչև այժմ ենթադրվում էր, որ նա միայն «Ազգային ջոջերում» Տերոյենցին նվիրված հատվածում է, որ հիշատակել է Նալբանդյանի անունը:

Պետք է նկատի ունենալ, որ սկսած Նալբանդյանի մահվան տարվանից, 1866 թվականից, երբ Պարոնյանը դեռ հրապարակախոսական ասպարեզ չէր մտել, Պոլսում արգելված էր Նալբանդյանի մասին դրական որևէ բան գրելը: Այդ արգելքը մասամբ թեթևացավ ռուս-թյուրքական պատերազմի շրջանում, վերականգնվեց 1880 թվականից: Հատկապես 1879 թվականից հետո («Ազգային ջոջեր»-ը լույս տեսնելու տարին) Նալբանդյանի անունը մամուլում հիշատակելը կապված էր մեծ դժվարությունների հետ: Այդ տարիներին մարդիկ երբ ուզում էին խոսել Նալբանդյանի մասին, դիմում էին եզոպոսյան լեզվի, կամ նրա ազգանունը դարձնում էին Պայտարյանց և որպես այդպիսին խոսում նրա մասին, և կամ հրապարակում էին նրա ստեղծագործություններն առանց հեղինակի անվան:

Այս բոլորից հետո, պարզ է, որ Հ. Պարոնյանը Նալբանդյանի մասին համեմատաբար ազատ կարող էր գրել միայն ռուս-թյուրքական պատերազմին նախորդող տարիներին, այդ պատերազմի ընթացքում և պատերազմի հաջորդ մեկ տարում, երբ քաղաքական բարդ պայմաններում համեմատաբար թուլացել էր ցենզուրական հետապնդումը:

Մեզ շատ հետաքրքրում էր այն հարցը, թե Պարոնյանը բացի «Ազգային ջոջեր»-ի վերոհիշյալ հատվածից, որևէ այլ առիթով չի՞ հիշատակել Նալբանդյանի անունը կամ չի՞ օգտագործել նրա մտքերը:

Վերջերս կատարած մեր պրպտումները անակնկալ կերպով երևան հանեցին Պարոնյանի հրապարակախոսական ուշագրավ էջերից մեկը, որի վրա մինչև այժմ ոչ ոք ուշադրություն չի դարձրել: Պարոնյանը այդ ֆելյետոնի մեջ սուր քննադատության է ենթարկում ժամանակի բուրժուական բարքերը, սուլթանական կառավարությունը և ամերիկյան իմպերիալիստների ոտնձգությունները:

Պարոնյանը այդ քննադատությունը կատարում է շատ ուշագրավ գրական մի պրիոմով: Նա Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունից վերցնելով «Կեցցե կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում» հայտնի միտքը, այն դարձրել է իր ֆելյետոնի համար վերնագիր, և հետո հոգիվածի առաջին նախադասության մեջ լայն ընդհանրացման ենթարկելով էպիսայի քաղաքական-բաբոյական վիճակը, այն գնահատել է Նալբանդյանի վերոհիշյալ դիպուկ արտահայտությամբ և դրել.

«Երբ շրջահայաց ակնարկ նետե մարդ աշխարհի գործոց ընթացից վերա,

Մեծ Նալբանդյանցի սա խոսքն հիշե՛ ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում»:

Պարոնյանի այս ֆելլետոնը, որի ամեն մի նախադասության մեջ կրկնվում է Նալբանդյանի հիշված արտահայտությունը և առաջադրված հարցը հիմնավորվում է նրանով, առավել ևս վկայում է գաղափարական այն սերտ մոտիկության մասին, որն ունեցել է Պարոնյանը Նալբանդյանի հետ:

Պարոնյանի աշխարհայացքի գնահատման համար լուրջ նշանակություն ունեցող գրական այս պատճառիկը, որը տպագրված է «Թատրոն» պարբերականի 1876 թ. դեկտեմբերի 18-ի համարում, ստորև բերում ենք ամբողջությամբ և հանձնում Պարոնյանով զբաղվողների ուշադրությանը:

«ԱՊՐԻ ԿԱՏՈՒՆ, ՈՐ ԻՐ ՓՈՐԻՆ ՀԱՄԱՐ ՄՈՒԿ Է ԲՐՆՈՒՄ»

«Երբ շրջահայաց ակնարկ նետե մարդ, աշխարհի գործոց ընթացից վերա, Մեծ Նալբանդյանցի սա խոսքն հիշե՛ ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում»:

Ուստի երբ տեսնես ազնիվ ընթերցող, որ փիլիսոփա քու մեկ բարեկամն, փոխ ստակի տեղ տա քեզ խղճալով, մի պաթալ սենեթ, որ գործդ տեսնես, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ բանը բանեն է արդեն անցած, ազգին մարտիրոսն հոգին ավանդած, ու մեր պատրիարքն խստիվ կխոսի, դեմ մահվան առթին խեղճ Սհրվատյանի, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ անարժաններ թաղական ըլլան և անճոռնիներ ալ հոգաբարձու, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ դու հարուստ ես և շողոթորթներ կառաքեն քեզի շատ թեմենաններ, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ աղքատ ես դու և հորդ մահվան շորս հոգի հազիվ գան ներկա ըլլան, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ դու հարուստ ես անվան և տոնիդ խումբ խումբ բարեկամք գան տոնել օղիդ, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ էշդ կամ ձիդ իրիկվան դարձին առուվնե շատ շուտ շուտ տուն քալե, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ տան երեցդ պատարագվոր է և քեզի առատ նշխարք մաս ղրկե, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ մեր ամուճայն Մեծն Ռուսիո քրիստոնեից օգուտին համար, այսպես մեծամեծ զոհողություններ ընել ցրծնե, ըրածը չի կա, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

Երբ ամերիկյան մեծ դեսպանն ու կին, մեր դպրոցներուն այցելու եկին, ըսե՛ անոր պես, թե ապրի կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում:

«Թատրոն», 1876, դեկտեմբեր 18, № 216:

* * *

Այսպիսով, Հ. Պարոնյանի հրատարակած և աշխատակցած՝ մեր տրամադրության տակ գտնվող պարբերականների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեծ երգիծաբանի գրական ժառանգության մի զգալի մասը տեղ չի գտել նրա երկերի լիակատար ժողովածուի տասնմեկ հատորների մեջ կամ այլ հրատարակություններում, նյութեր, որոնք իրենց գաղափարական բովանդա-

կոթյամբ և գեղարվեստական, երգիծական արժանիքներով կազմում են Պարոնյանի գրական ժառանգության արժեքավոր մասը և պետք է, որ նրա երկերի գիտական հրատարակության մեջ ունենան իրենց տեղը:

Այգ նյութերը, որոնց մի մասը անշուշտ հայտնի են Պարոնյանով զբաղվողներին, բայց ոչ ընթերցող լայն հասարակությանը, հետևյալներն են.

1. Պարոնյանի հատորներից դուրս մնացած «Հուշարար», «Հուսարար», «Նսթեր» և Քամ ծածկանուններով լույս տեսած աշխատությունները:

«Հուշարար» ստորագրությամբ Պարոնյանի գրած «Դուկտոր Ռուսինյան» կենսագրական պորտրեն հանդիսանում է Պարոնյանի քաղաքական սատիրայի փայլուն էջերից մեկը, ուր սուր քննադատության է ենթարկվում հայ լիբերալիզմի խոսքի և գործի հակասությունը, նրա հասարակական գործունեության հակաժողովրդական քնույթը:

Բացի վերոհիշյալ «ըռչից», «Թատրոնի» էջերում մնացել է նաև անստորագիր մի երգիծական պորտրե, որը անկասկած կազմում է «Ազգային ջոջերը» շարքի նյութերից մեկը: Դժբախտաբար Նրևանում կա միայն «Թատրոնի» այն համարը, ուր տպագրված է պորտրեի սկիզբը, շարունակությունը չկա, սակայն այդ հատվածից իսկ երևում է պարոնյանական երգիծանքի ուժը: Քամ ծածկանունով «Արձագանքում» տպված «Ծիծաղները» և Հուսարար ծածկանունով «Փարոս Հայաստանի» պարբերականում լույս տեսած աշխատությունները, որոնք ոչ Պարոնյանի որևէ հատորում են տեղ գտել և ոչ էլ նրանց մասին խոսվել է սովետական շրջանում, նույնպես հանդիսանում են Պարոնյանի քաղաքական սատիրայի հաջողված նմուշները, որտեղ սուր քննադատության են ենթարկվում եվրոպական գաղութարարները, սովթանական բռնապետական կարգերը:

Նսթեր ստորագրությամբ լույս տեսած հոդվածներից մասնավորապես մեկը՝ նվիրված «Բաղդասար աղբար» կոմեդիային, մի փայլուն էջ է ավելացնում Պարոնյանի գրականագիտական-քննադատական աշխատությունների վրա և վկայում է հեղինակի մեծ տաղանդը որպես գրականության տեսաբանի:

Պարոնյանի հատորներից դուրս է մնացել «Հին աշխարհին խաչիկը և նոր աշխարհին՝ Դաբիկը» ընդարձակ աշխատությունը, տպագրված «Թատրոնի» 1874 թ. մի շարք համարներում՝ Նս ստորագրությամբ, և «Կեցցե կատուն, որ իր փորին համար մուկ է բռնում» երկը, որը խոշոր նշանակություն ունի Պարոնյանի աշխարհայացքի համար:

«Թատրոնի» և այլ պարբերականների էջերում մնում են մի շարք անստորագիր նյութեր, որոնք անառարկելիորեն Պարոնյանին են: Նրանց մեջ ի

1 Յուլյո տալու համար, որ մոտ 80 տարի անհայտության մեջ մնացած վերոհիշյալ երկը նույնպես «Ազգային ջոջերի» մասն է կազմում, մենք այստեղ մեջ ենք բերում նրա սկիզբը:

«Օրիորդ Մ . . . ծնավ ըստ ճիշտ թվականին 1833-ին, կամ ըստ յուր թվականին 1848-ին: Զինքը յուր դեղի գալրոցը դրին դաստիարակություն առնելու համար: Միայն այրուքներ հինգ վարժապետէ սորվեցավ: Թեև ուսման հարմարություն ունեցող կերևար, բայց երբ որ քերականը լմնցուց, վարժապետն ծնողացն ըսավ որ իմ դիտցածիս ամենն ալ սովորեցուցի, կուզեք նե ուրիշ խորունկ կարգացողի մը քով տվեք: Ուստի ծնողքը փափարելով որ իրենց զավակը ավելի լավ սովորի, դպրոցեն հանելով տիրացու Յ. . . -ին քով տվին, որն որ զինեպանությունը նոր ձգած էր և աղեկ ժամագիրք կուտար:»

հայտ է գալիս հեղինակի վերաբերմունքը ժամանակի այլ և այլ դեպքերի, նկատմամբ: Այսպես, «Թատրոնի» 1874 թ. № 66-ում Պարոնյանը ոգջունելով հռչակավոր ծովանկարիչ Հովհ. Այվազովսկու ժամանումը Պոլիս, տալիս է նրա ստեղծագործության հիանալի բնութագիրը, ընդգծելով Այվազովսկու արվեստի խորը ռեալիզմը: «Բնությունը,— գրում է Պարոնյանը Այվազովսկու մասին,— որ առաջին գաղտնապահ մէ, չէ կրքեր խեղճը բան մը պահել Այվազովսքիեն: Սա յուր վրձինը առած բնության խորն է թափանցեր և անոր բոլոր գաղտնիքներուն տեղեկանալով՝ զանոնք ի տես հաներ է: Բնությունն ալ ունի հիմա իր հայելին: Այվազովսկին նկարներուն նայելուն պես կրնա անոր մեջը տեսնել իր պատկերը»:

2. Հատորներից դուրս է մնացել Պարոնյանի հայատառ թյուրքերենով գրած ամբողջ ստեղծագործությունը, որտեղ քննադատվում են եվրոպական գաղութարարների ասսիմիլատորական քաղաքականության հետևանքով իրենց ժողովրդից հեռացած թյուրքախոս հայ ընտանիքների կենցաղային այլաձևացումները: Այդ երկերում մերկացնելով եվրոպական գաղութարարների գործակալներին, Պարոնյանը սուր ծաղրի է ենթարկում հայ կաթոլիկ բուրժուազիայի թմբկահարած ֆրանսիական ցիվիլիզացիան, ցույց է տալիս հայ հասարակական կյանքում նրա կատարած կործանիչ գերը:

Հայատառ թյուրքերենով գրված երկերի մեջ, որոնց ծավալը կարող է կազմել մի ամբողջ հատոր, քննադատության է ենթարկվում նաև սուլթանական կառավարությունը, մասնավորապես թյուրքական դաժան ցենզուրան: Պարոնյանը ոչ միայն չի վախեցել թյուրքական բռնապետությունից, այլ իր խոսքը առավել ևս տեղ հասցնելու համար գրել է հատկապես թյուրքերեն, տեղի տալով ցենզուրայի մոլեգնությանը, որի հետևանքով հաճախ փակվում էին նրա խմբագրած պարբերականները:

Մեր թվարկած վերոհիշյալ նյութերից բացի, բավականաչափ մեծ ծավալ կարող են կազմել Պարոնյանի այն երկերը, որոնք տպագրված են այնպիսի հանդեսներում կամ թերթերում, որոնց հավաքածուները չեն գտնվում Երևանի գրադարաններում:

Պարոնյանի երկերի գիտական հրատարակության նախապատրաստման ժամանակ հաջորդ քայլը պետք է լինի ձեռք բերել այդ հազվագյուտ հրատարակությունները, հավաքել բոլորը և սովետական ընթերցող հասարակությանը ներկայացնել անմահ երգիծաբանի ամբողջ գրական ժառանգության լիակատար ժողովածուն, որը կլինի հայ մեծ դեմոկրատ գրողի հիշատակի լավագույն հավերժացումը: